
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՈԹՅԱՆ ԲԱՑԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (քրեականացման որոշ հարցեր)

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Օրենսդրական բացերն իրավական համակարգի այն անկատարություններն են, որոնք պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Մի կողմից օրենսդրական բացերը իրավական իրականության օբյեկտիվ երևույթներ են. դրանք եղել են և կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ կշարունակվի հասարակական հարաբերությունների զարգացման գործընթացը, և իրավական կարգավորումը ժամանակային առումով հետ կմնա այդ զարգացումից: Մյուս կողմից, օրենսդրության զարգացումը պայմանավորված է օրենսդրի՝ հասարակական հարաբերությունների որոշակի համալիրի իրավական կարգավորման անհրաժեշտության սուբյեկտիվ գնահատականով: Իսկ այդ գնահատականը տարբեր պատճառներով (օրինագծերի մշակմամբ զբաղվող մասնագետների՝ օրենսդրական տեխնիկային տիրապետելու ցածր մակարդակը, կարգավորվող հարաբերությունների էության և իրավական կարգավորման ծավալների մասին սխալ պատկերացումը և այլն) միշտ չէ, որ ամբողջությամբ է արտացոլում իրավական կարգավորման իրական հասարակական պահանջումները:

Օրենսդրական բացերը ժամանակին հայտնաբերելն ու դրանք լրացնելը պետք է լինեն օրենսդրական գործունեության ցանկացած բնագավառի առաջնահերթություններից մեկը: Իսկ «*nullum crimen sine lege*» («չկա հանցագործություն առանց այդ մասին օրենքում նշված լինելու») սկզբունքն անչափ կարևոր է դարձնում հատկապես քրեական օրենսդրության բացերի լրացման խնդիրը:

Անդրադառնալով քրեական քաղաքականության շրջանակներում քրեական օրենսդրության բացերի լրացման հիմնահարցին՝ Մ. Ա. Կաուֆմանն առանձնացնում է քրեական օրենքում առկա բացերի հետևյալ՝ առավել բնորոշ տարբերակները՝

1. քրեական օրենքում հանրորեն վտանգավոր առանձին արարքների քրեական հակաօրինականության մասին ուղղակի նշված չլինելը,

2. քրեական օրենքի գործող նորմի անկատարությունը, հանցավոր արարքի հատկանիշների հստակ նշված չլինելը, որոնք թույլ չեն տալիս այդ նորմը կիրառել օրենսդրի իրական կամքին համապատասխան (իսկ երբեմն օրենսդրի իրական կամքը մնում է անհայտ)¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռում նշել է, որ քրեական օրենքը չպետք է լայն մեկնաբանության տեղիք տա ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ համան-

¹ Տե՛ս **Кауфман М. А.** Устранение пробелов в уголовном законодательстве как одно из направлений уголовной политики//Современные проблемы уголовной политики, уголовного права, криминологии и уголовно-исполнительного права. Сборник научных статей. Академия управления МВД России. М., 2007, էջ 79:

մանությանը. սրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակորեն սահմանված լինի օրենքով²: Ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 5 հոդվածում ամրագրված օրինականության սկզբունքից՝ քրեական օրենսդրությունում առկա բացերը պետք է լրացվեն ոչ թե քրեական օրենքն անալոգիայով կիրառելու կամ քրեաիրավական նորմերի տարածական մեկնաբանության, այլ բացառապես քրեականացման միջոցով: Քրեականացումը հանցագործություն չհամարվող արարքներից որոշակի հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության մասին որոշման ընդունումն ու այդ որոշումը քրեական օրենսգրքի «Հատուկ մասի» հոդվածում ամրագրելն է հիմնական հանցակազմ նախատեսելու կամ դրանում հատկանիշներ ավելացնելու, փոփոխելու կամ վերացնելու միջոցով:

Որոշակի արարքը քրեականացնելու անհրաժեշտության և, հետևաբար, քրեական օրենսդրությունում բացի առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ համապատասխան փաստարկների բավարար ամբողջությամբ կհիմնավորվի՝

1. քրեաիրավական արգելքի սահմանման պահանջումները,
2. քրեաիրավական արգելքի սահմանման թույլատրելիությունը,
3. քրեաիրավական նորմի իրացման հնարավորությունը:

Ընդ որում, քրեականացման պահանջումների փաստարկումն իր հերթին պետք է ներառի արարքի հանրային վտանգավորության հիմնավորումը և արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ քրեականացման նպատակահարմարության հիմնավորումը: Քրեականացման թույլատրելիությունը փաստարկելիս անհրաժեշտ է հիմնավորել, որ տվյալ արարքի հանցավորությունը դեռևս սահմանված չէ, որ տվյալ քրեաիրավական նորմի ընդունումը չի առաջացնի համակարգային-իրավական հակասականություն, և որ այդ արարքի համար քրեաիրավական արգելքի սահմանումը համապատասխանում է հասարակական գիտակցությանը: Իսկ քրեաիրավական նորմի իրացման հնարավորության փաստարկումը պետք է ներառի արարքի հատկանիշների իրավական հստակ բնորոշման հնարավորության, թույլատրելի միջոցներով արարքը բացահայտելու և ապացուցելու հնարավորության, քրեաիրավական նորմի կիրառման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և կազմակերպչական միջոցների առկայության հիմնավորումը:

Քրեաիրավական արգելքի սահմանման պահանջումների և թույլատրելիության, ինչպես նաև քրեաիրավական նորմի իրացման հնարավորության օգտին բերվող փաստարկների համակարգի ուսումնասիրությունը և քր. օր.-ի «Հատուկ մասի» վերլուծությունը թույլ է տալիս խոսելու գործող քրեական օրենսդրությունում առկա որոշ բացերի մասին և ներկայացնելու քրեականացման որոշ առաջարկություններ:

Այսպես, կարծում ենք, որ քր. օր.-ի հոդված 131-ի 1-ին մասի դիսպոզիցիայի խմբագրման միջոցով անհրաժեշտ է որոշակիորեն ընդլայնել մարդուն առևանգելու քրեականացման ծավալը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճիռը // Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու, Եր., 2003, էջ 365:

Ա. Ի. Կորոբեևը նշում է, որ քրեաիրավական նորմերի ձևակերպման գլխավոր խնդիրը քրեական օրենքի արտաքին ձևի և դրա ներքին բովանդակության, օրենսդրի մտահղացման և դրա իրագործման միջև առավելագույն համապատասխանության հասնելն է³: Ակնհայտ է, որ մարդուն առևանգելու քրեականացման կապակցությամբ օրենսդրի մտահղացումն արտահայտվում է անձի անձնական ազատության և անձեռնմխելիության ու ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքների (Սահմանադրության հոդվածներ 16, 25) քրեաիրավական պաշտպանության մեջ: Սակայն օրենսդրի մտահղացման և դրա օրենսդրական ձևակերպման համապատասխանությունն այս դեպքում կասկած է հարուցում, քանի որ նշված սահմանադրական իրավունքների քրեաիրավական պաշտպանության շրջանակները սահմանափակվել են այդ իրավունքների խախտման եղանակներով, որոնք սպառնիչ նշվել են 131 հոդվածում՝ խաբեությունը, վստահության չարաշահումը, բռնությունը և դա գործադրելու սպառնալիքը: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ մարդն առանց իր համաձայնության իր գտնվելու վայրից ուրիշ վայր տեղափոխվի նաև հոդված 131-ում չնշված այլ եղանակներով, օրինակ՝ շանտաժի միջոցով, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, անձի անօգնական վիճակը կամ մեղավորից նրա կախվածությունն օգտագործելով: Կարծում ենք, որ այդ առումով քր. օր.-ի հոդված 131-ի ներկայիս ձևակերպումը թերի է:

Օրինակ՝ Շվեյցարիայի քր. օր.-ի հոդված 183-ի 1-ին մասում որպես մարդուն առևանգելու եղանակներ նշված են բռնությունը, սպառնալիքը և խաբեությունը, սակայն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նույն կերպ է պատժվում նաև նա, ով առևանգում է իր գործողությունների բնույթն ու հետևանքները գնահատելուն կամ դիմադրություն ցույց տալուն անընդունակ կամ տասնվեց տարին չլրացած անձին: Ռուսաստանի Ռաշնության քր. օր.-ի հոդված 126-ում, Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 125-ում մարդուն առևանգելու եղանակներն ընդհանրապես նշված չեն, և հանցանքը նախատեսված է հասարակ դիսպոզիցիայի միջոցով, իսկ Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի հոդված 182-ի 1-ին մասում բացի խաբեությունից, վստահության չարաշահումից, բռնությունից և դա գործադրելու սպառնալիքից՝ որպես մարդուն առևանգելու եղանակ նշվել են նաև «հարկադրանքի այլ ձևեր»:

Կարծում ենք, որ հոդված 131-ի դիսպոզիցիայում մարդուն առևանգելու եղանակները նշելու անհրաժեշտություն չկա: Հանցագործության եղանակը քր. օր.-ի «Հատուկ մասի» հոդվածի դիսպոզիցիայում պետք է նշվի կամ այն դեպքում, երբ դա արարքի հանրային վտանգավորությունը ձևավորող գործոն է, կամ եթե տվյալ հանցանքը այլ հանցանքներից տարբերելու չափանիշ է: Ինչպես արդեն նշել ենք, մարդուն առևանգելու եղանակը չպետք է անձի ազատության և անձեռնմխելիության ու ազատ տեղաշարժվելու իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը պայմանավորող գործոն հանդիսանա: Բացի այդ, մարդուն առևանգելու եղանակը հանցագործությունների այլ տեսակներից այն սահմանազատելու չափանիշ չէ: Արարքը քրեականացնելիս պարզ դիսպոզիցիան կիրառվում է այն դեպքում, երբ «հիմք կա են-

³ Տե՛ս **Коробеев А. И.** Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, էջ 112:

թաղրելու, որ հանցագործությունը, ինչպես նաև դրա անվանումը հանրաճանաչ են, և անհրաժեշտություն չկա մանրամասն նկարագրելու այն»⁴: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք քր. օր.-ի հոդված 131-ի 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպել հետևյալ կերպ՝ «Մարդուն առևանգելը»:

Մարդուն առևանգելու օբյեկտը մարդու անձնական, ֆիզիկական ազատությունն է, որի հիման վրա էլ այդ հանցագործությունը ընդգրկվել է քր. օր.-ի 17-րդ գլխում: Սակայն արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերի՝ ազատության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող բաժիններում ներառված են ոչ միայն անձի ֆիզիկական ազատության, այլև վարքագծի ընտրության ազատության դեմ ուղղված հանցագործություններ: Այսպես, օրինակ՝ Շվեյցարիայի քր. օր.-ում որպես անձի ազատության դեմ ուղղված հանցագործություն նախատեսված է հարկադրանքը (հոդված 181): Հոդվածում հանցանքը բնորոշվում է որպես բռնության, սպառնալիքի կամ անձի կողմից իր վարքագծի ընտրությունը այլ կերպ սահմանափակելու միջոցով նրան հարկադրել կատարելու որոշակի գործողություն, ցուցաբերելու անգործություն կամ կրելու որոշակի զրկանքներ: Իսպանիայի քր. օր.-ի հոդված 172-ով պատասխանատվություն է սահմանված առանց համապատասխան լիազորություններ ունենալու անձի՝ օրենքով չարգելված որոշակի գործողություններ կատարելուն խոչընդոտելու կամ անձի կամքին հակառակ նրան որոշակի գործողությունների հարկադրելու համար: Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի հոդված 240-ը քրեորեն պատժելի է համարում բռնության կիրառմամբ կամ էական վնաս պատճառելու սպառնալիքով անձին որոշակի գործողություններ կատարելուն կամ անգործության ապօրինի կերպով հարկադրելը: Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի հոդված 185-ը նույնպես պատասխանատվություն է սահմանում հարկադրանքի համար: Հանցանքը բնորոշվում է որպես անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, անձի կամ նրա մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու, անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձնական գաղտնիք համարվող տեղեկություններ տարածելու, անձի կամ նրա մերձավորի ազատությունների և օրինական շահերի ոտնահարման սպառնալիքով որևէ գործողություն կատարելուն կամ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելը, եթե բացակայում են ավելի ծանր հանցագործության հատկանիշները: Կարծում ենք, որ քր. օր.-ի 17-րդ գլխից ևս նպատակահարմար է լրացնել անձի վարքագծի ազատության դեմ ուղղված հարկադրանքի համար պատասխանատվություն նախատեսող նորմով:

ՀՀ քր. օր.-ում որպես անձի վարքագծի ազատության դեմ ուղղված հանցանք կարելի է համարել սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (հոդված 137), սակայն արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերում այդ արարքի քրեականացման շրջանակներն ավելի լայն են: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի հոդված 241-ը պատասխանատվություն է սահմանում անձի կամ նրա մերձավորի նկատմամբ հանցագործություն կատարելու սպառնալիքի կամ անձի կամ նրա մերձավորի

⁴ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս», Եր., 2007, էջ 44:

նկատմամբ իբր կատարվելիք հանցագործության մասին ակնհայտ սուտ տեղեկություն հաղորդելու համար: Իսպանիայի քր. օր.-ի հոդված 169-ը պատասխանատվություն է սահմանում անձին, նրա ընտանիքին կամ մերձավորին վնաս պատճառելու սպառնալիքի համար, եթե այդ վնասը անձի կյանքի, առողջության, սեռական ազատության, արժանապատվության կամ գույքի դեմ ուղղված հանցագործությունն է:

Խոսելով մարդու դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքների քրեականացման հեռանկարների մասին՝ նշենք, որ կենսաբանության և բժշկության ոլորտներում նորագույն գիտական նվաճումներով պայմանավորված՝ նոր հարաբերությունների քրեաիրավական կարգավորման անհրաժեշտություն է առաջանում: Նշված ոլորտում հայրենական քրեական օրենսդրության մեջ առկա են որոշակի բացեր, որոնց լրացումը պետք է կատարվի արտասահմանյան երկրների դրական փորձը հաշվի առնելով: Խոսքը, մասնավորապես, մարդու վերարտադրողականության, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման, գենետիկայի ոլորտներում նորագույն բիոտեխնոլոգիաների կիրառման մասին է: Օրինակ՝ Իսպանիայի քր. օր.-ի հինգերորդ բաժինը («Գենետիկական մանիպուլյացիաները») ներառում է այնպիսի հանցագործությունների վերաբերյալ նորմեր, ինչպիսիք են ծանր հիվանդությունների բուժմանը չառնչվող՝ նպատակով մարդկային գեների հետ մանիպուլյացիան, որը հանգեցնում է գենոտիպի փոփոխմանը (հոդված 159), կենսաբանական գենքի կամ զանգվածային ոչնչացման գենքի արտադրության համար գենային ինժեներիայի օգտագործումը (հոդված 160), մարդու վերարտադրողականության հետ չկապված՝ նպատակային մարդկային ձվաբջջի բեղմնավորումը, կլոնավորման կամ այլ գործողությունների միջոցով նույնական մարդկային էակների ստեղծումը, որն ուղղված է ռասայի սելեկցիային (հոդված 161), առանց կնոջ համաձայնության նրա օրգանիզմում արհեստական բեղմնավորում իրականացնելը (հոդված 162): Գիտնականները նշում են, որ մարդու վերարտադրողականության և գենետիկայի ոլորտներում նորագույն բիոտեխնոլոգիաների կիրառումն արգելելու գլխավոր փաստարկը այդ տեխնոլոգիաների անկատարությունն է: Այսպես, Դոլլի անունով հայտնի գառնուկի ստեղծող Յան Ուիլմուտը դատապարտել է մարդու կլոնավորումը: Բժշկության և գենետիկայի ոլորտի դոկտոր Ֆիլիպ Ռայլին նշում է, որ կլոնավորված էմբրիոնների միայն մեկ տոկոսն է նորմալ զարգանում⁵: Պակաս կարևոր չէ նաև խնդրի բարոյաէթիկական, կրոնական-գաղափարական կողմը: Հռոմի պապ Հովհաննես Պողոս 2-րդը ժամանակին խստորեն դատապարտել է նման արարքները՝ նշելով, որ անձի արժանապատվությունն ու արժեքը անտեսող ցանկացած գիտափորձ անթույլատրելի է⁶:

Հայաստանի Հանրապետությունում նշված արարքների տարածվածության վերաբերյալ տվյալների բացակայությունը չի կարող դրանց քրեականացման հակափաստարկ լինել: Նշված ոլորտում մեր քրեական օրենսդրությունում առկա բացերը կարող են հանգեցնել հանցավոր գործունեության. տվյալ տեսակով զբաղվելու համար Հայաստանի Հանրապետության

⁵ Տե՛ս **Richard Willing**. Cloning // USA Today, July 3rd, 2001:

⁶ Տե՛ս **Pope Paul II**. "Address to International Congress on Transplants" August 29, 2000// <http://www.cin.org/pope/organ-transplant-cloning.html>:

նպաստավոր դաշտ դառնալուն: Ուստի այս ուղղությամբ քրեական իրավունքի, կրիմինալոգիայի, կենսաբանության և բժշկության ոլորտների համալիր հետազոտությունները բավականին արդիական են և կապահովեն հասարակական հարաբերությունների՝ գիտության զարգացման ներկայիս մակարդակին համապատասխանող քրեաիրավական կարգավորումը:

Գտնում ենք, որ հարկավոր է որոշակիորեն ընդլայնել նաև սեփականության դեմ ուղղված հանցագործություններից մեկի՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (հոդված 184) քրեականացման շրջանակները: Նշված հոդվածով քրեորեն պատժելի է միայն խոշոր չափերով գույքային վնաս պատճառելը, մինչդեռ, կարծում ենք, քրեականացման համար բավարար հանրային վտանգավորություն ունի նաև խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով խոշոր չափերի չհասնող գույքային վնաս պատճառելը:

Առհասարակ, քաղաքացիաիրավական կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունները քրեաիրավական պաշտպանության տակ վերցնելու համար այդ հարաբերությունների դեմ ուղղված արարքը պետք է բնութագրվի որոշակի հատկանիշներով, որոնք արարքին հաղորդում են քրեականացման համար բավարար հանրային վտանգավորություն: Իհարկե, սեփականատիրոջը պատճառվող գույքային վնասի խոշոր չափը արարքի հանրային վտանգավորությունը ձևավորող գործոն է: Սակայն քրեականացվող արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոններ են նաև հանցագործության եղանակը, գործիքներն ու միջոցները, վայրը, ժամանակը, իրադրությունը, մեղքը, հանցավոր գործունեության շարժառիթը և նպատակը⁷: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հոդված 184-ով նախատեսված հանցակազմում, բացի վնասի չափերից, արարքի հանրային վտանգավորությունը ձևավորող գործոն է նաև վնասը պատճառելու եղանակը՝ խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը: Հետևաբար, հոդված 184-ի 1-ին մասում գույքային վնաս պատճառելու չափերի նվազեցումը «փոխհատուցվում է» արարքի կատարման եղանակով:

Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության համապատասխան նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու չափերը հիմնականում համարժեք են խարդախությամբ պատճառվող գույքային վնասի չափերին: Այսպես, օրինակ՝ Ռուսաստանի Ռաշնության քր. օր.-ի հոդված 165-ը, պատասխանատվություն սահմանելով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու համար, քրեական պատասխանատվությունը չի կապում գույքային վնասի չափի հետ: Նույն մոտեցումն է առկա նաև Ռազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 182-ում: Շվեյցարիայի քր. օր.-ի հոդված 149-ը պատասխանատվություն է սահմանում հյուրանոցում կամ ռեստորանում ծառայությունների դիմաց չվճարելու համար, իսկ հոդված

⁷ Տե՛ս **Ляпунов Ю. И.** Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. М., 1989, էջ 117, **Грачева Ю. В.** Критерии отграничения преступлений от административных правонарушений //Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. Материалы IV Международной научно-практической конференции, МГУ им. М.В.Ломоносова, М., 2005, էջ 138-140:

150-ը քրեորեն պատժելի է համարում խաբեության միջոցով հատուցելի ծառայություններից օգտվելը (հասարակական տրանսպորտից օգտվելը, էքսկուրսիայի, ցուցահանդեսի կամ այլ միջոցառման մասնակցելը): Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. օր.-ի հոդված 265a-ն պատասխանատվություն է սահմանում խաբեության եղանակով այնպիսի ծառայություններից օգտվելու համար, ինչպիսիք են՝ ավտոմատի կամ հասարակական նպատակներին ծառայող հեռահաղորդակցության համակարգի ծառայություններից օգտվելը, տրանսպորտով երթևեկելը, որևէ միջոցառման մասնակցելը կամ որևէ հաստատություն մուտք գործելը և այլն:

Կարծում ենք, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմում նպատակահարմար է որոշակիորեն իջեցնել վնասի՝ քրեորեն պատժելի նվազագույն չափը, որը որոշելու համար հարկավոր է կատարել քաղաքացիաիրավական ոլորտին առնչվող համապատասխան ուսումնասիրություններ:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է քրեական պատասխանատվություն սահմանել սառը, գազային կամ նետողական զենք ապօրինի պատրաստելու համար: Քրեականացման պահանջումները հիմնավորվում է հետևյալ փաստարկներով: Քր. օր.-ի հոդված 236-ը պատասխանատվություն է սահմանում միայն ապօրինի կերպով հրազեն, դրան համալրող դետալներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր պատրաստելու կամ նորոգելու համար: Սակայն սառը, գազային և նետողական զենք ապօրինի պատրաստելու հետևանքով ևս հանցավոր նպատակներով դրանց օգտագործման իրական հնարավորություն է ստեղծվում, և հասարակական անվտանգությանը սպառնացող վտանգն այստեղ ակնհայտ է: Բանն այն է, որ զենքի պատրաստումը (արտադրությունը) դրա շրջանառության սկիզբն է: Հետևաբար, սառը, գազային և նետողական զենքի ապօրինի պատրաստման քրեականացումը ոչ միայն էականորեն կնպաստի այդ արարքների կանխմանը, այլև թույլ կտա սահմանափակելու նշված առարկաների ապօրինի շրջանառությունն ու նվազեցնելու դրանք հանցավոր նպատակներով օգտագործելու հնարավորությունը:

Սառը, գազային և նետողական զենք պատրաստելու ապօրինությունը հաստատելը պրակտիկայում դժվարություններ չի առաջացնի, քանի որ զենքի պատրաստմանը վերաբերող հարաբերությունները կարգավորված են «Ձենքի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, պատրաստման ապօրինությունը վերաբերում է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում շրջանառության համար թույլատրված սառը, գազային և նետողական զենքի պատրաստման՝ օրենքով սահմանված կարգի խախտմանը: «Ձենքի մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է նաև քաղաքացիական և ծառայողական զենքի շրջանառության վրա տարածվող սահմանափակումները, իսկ համաձայն նշված օրենքի՝ զենքի արտադրությունը դրա շրջանառության մեջ մտնող գործողություններից մեկն է (հոդված 1, ժ) կետ): Հետևաբար, ապօրինի կհամարվի նաև սառը, գազային և նետողական ցանկացած զենքի այն տեսակների պատրաստումը, որոնց շրջանառությունը սահմանափակված է օրենքով:

Նշենք, որ գազային, սառը և նետողական զենք ապօրինի պատրաստելը քրեականացված է Ռուսաստանի Դաշնության քր. օր.-ի հոդված 223-ով, Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի հոդվածներ 296-ով և 297-ով,

Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 252-ով: Կարծում ենք, որ հիմնավորված կլինի այդ արարքի քրեականացումը նաև ՀՀ քր. օր.-ով:

Գտնում ենք, որ որոշակի ընդլայնման կարիք ունի հասարակական բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շրջանակը: Այսպես, օրինակ՝ Ռուսաստանի Ղաշնության քր. օր.-ի հոդված 245-ը, Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 276-ը պատասխանատվություն են սահմանում կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի համար: Բացի այդ՝ Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 274-ը քրեորեն պատժելի է համարում դաժանության և բռնության պաշտամունք քարոզող ստեղծագործությունների տարածումը: Շվեյցարիայի քր. օր.-ի հոդված 135-ով պատասխանատվություն է սահմանված մարդկանց կամ կենդանիների նկատմամբ դաժանություն ցուցադրող նյութեր արտադրելու, ներմուծելու, իրացնելու, գովազդելու և ցուցադրելու համար: Գերմանիայի Ղաշնային Հանրապետության քր. օր.-ի հոդված 131-ով քրեականացված է մարդկանց նկատմամբ դաժանության կիրառում պատկերող և բռնությունը փառաբանող նյութերի տարածումը:

Նշված արարքները քրեականացնելու պահանջմունքի հիմնավորումը չի սահմանափակվում միայն այն փաստարկով, որ դրանք վնաս են պատճառում հասարակական բարոյականությանը: Կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքի, ինչպես նաև դաժանություն ու բռնություն քարոզող ստեղծագործությունների տարածման հանրային վտանգավորությունն արտահայտվում է նաև այն բանում, որ դրանք ազդեսիայի, բռնությամբ կատարվող հանցագործությունների դետերմինանտներից են: Բռնության քարոզումը հանգեցնում է դրա ընդօրինակմանը, բացի այդ, հայտնի է, որ բռնության ակտերի ցուցադրումը անձի մեջ ուժգնացնում է տագնապանությունը, որն իր հերթին ազդեսիայի պատճառներից է: Պետք է նշել, որ հայրենական մասնագիտական գրականության մեջ արդեն նշվել և հիմնավորվել է բռնություն քարոզող արտադրանքի տարածումը և կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքը քրեականացնելու անհրաժեշտությունը, որն էական նշանակություն կարող է ունենալ բռնությամբ կատարվող հանցագործությունների կանխարգելման համար⁸:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է քրեական պատասխանատվություն սահմանել փաստաբանական գործունեության դեմ ուղղված մի շարք արարքների համար: ՀՀ Սահմանադրության հոդված 18-ը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք, իսկ ըստ հոդված 20-ի 1-ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք»: Պետությունը, հռչակելով անձի նշված իրավունքները, միաժամանակ պարտավորվում է ապահովել դրանց լիարժեք իրացումը: Այսպես, Սահմանադրության հոդված 14-ի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

⁸ Տե՛ս Գաբույան Ա. Ա. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ер., 2007, էջ 222:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման կարևոր երաշխիքներից մեկը փաստաբանության ինստիտուտն է: Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի՝ «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ»: Նշված հոդվածի համաձայն՝ փաստաբանության գործունեության սկզբունքներից մեկը անկախությունն է: Ելնելով դրանից՝ «Փաստաբանության մասին» օրենքը փաստաբանին տվել է իրավական հարցերով անկախ խորհրդատուի կարգավիճակ (հոդված 17): Անկախությունը փաստաբանական գործունեության անքակտելի բնութագրիչն է, քանի որ փաստաբանը պետք է ազատ լինի ցանկացած անհարկի միջամտությունից, հատկապես իրավապահ մարմիններից և ամբողջությամբ վերցրած՝ պետությունից⁹:

Փաստաբանական գործունեության անկախության և փաստաբանի պաշտպանության ապահովման կարևորությունն ընդգծվել է ՄԱԿ-ի Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված 8-րդ կոնգրեսի (1990 թ., Հավանա) ընդունած «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներում»: Նշված սկզբունքների 16-րդ կետը սահմանում է, որ կառավարություններն ապահովում են, որ իրավաբանները՝

1. կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում,

2. կարողանան տեղաշարժվել և իրենց հաճախորդների հետ անարգել խորհրդակցել երկրի ներսում և նրա սահմաններից դուրս,

3. դատական հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն մասնագիտական ընդունված պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաև չենթարկվեն մնացած հետապնդման և պատժամիջոցների սպառնալիքների:

Իսկ նշված սկզբունքների 17-րդ կետի համաձայն՝ «Այն դեպքերում, երբ իրենց գործառնությունների կատարման հետևանքով սպառնալիք է ծագում իրավաբանների անվտանգության համար, իշխանությունները ապահովում են նրանց պատշաճ պաշտպանությունը»:

Հռչակելով փաստաբանի իրավական պաշտպանությունը՝ «Փաստաբանության մասին» օրենքի հոդված 22-ը ամրագրում է. «Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց զույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո: Պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, զույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով»:

Փաստաբանի պաշտպանության և փաստաբանական գործունեության անկախության ապահովման քրեաիրավական երաշխիքը պետք է լի-

⁹ Стен Сонькин Н. Б. Международно-правовые стандарты адвокатской деятельности. Правовые основы адвокатской деятельности и адвокатуры // Адвокатская деятельность и адвокатура в России. Введение в специальность. Ч. 1. М., 2006, էջ 148:

նի փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման կապակցությամբ նրա նկատմամբ կատարվող հանրորեն վտանգավոր արարքների քրեականացումը:

Քր. օր.-ի հոդված 347-ը քրեական պատասխանատվություն է սահմանում պաշտպանի կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի (2-րդ մաս), կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու (3-րդ մաս), ինչպես նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու (4-րդ մաս) համար: Ինչպես երևում է հոդվածի ձևակերպումից, փաստաբանի նկատմամբ սպառնալիքը կամ բռնի գործողությունները համարվում են արդարադատության դեմ ուղղված հանցագործություն միայն այն դեպքում, երբ նա մասնակցում է քրեական դատավարությանը որպես պաշտպան:

Սակայն փաստաբանական գործունեությունը չի սահմանափակվում միայն քրեական գործերով պաշտպանությամբ: Համաձայն «Փաստաբանության մասին» օրենքի հոդված 5-ի՝ «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով»: Բացի քրեական գործերով պաշտպանությունից՝ այն ներառում է նաև խորհրդատվությունը, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը, ինչպես նաև ներկայացուցչությունը, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը: Փաստաբանի կողմից մատուցվող իրավաբանական օգնության բովանդակությունը առավել մանրամասնեցված է «Փաստաբանության մասին» օրենքի հոդված 17-ում:

Ինչպես նշում է Գ. Վ. Կրիլովը, այս կամ այն արարքի համար քրեաիրավական արգելք սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել քրեականացման քաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, իրավական և գործնական նպատակահարմարությունը: Ըստ հեղինակի՝ իրավական նպատակահարմարությունը նշանակում է, որ քրեաիրավական նորմը պետք է բխի սահմանադրությամբ և միջազգային իրավական համաձայնագրերով հռչակված դրույթներից, չհակասի գործող օրենսդրությանը¹⁰: Կարծում ենք, որ ելնելով քրեականացման իրավական նպատակահարմարության սկզբունքից, մասնավորապես՝ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի առավել արդյունավետ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունից՝ քր. օր.-ի հոդված 347-ով նախատեսված հանցագործության տուժողների շարքում պետք է նշվի ոչ միայն պաշտպանը, այլև փաստաբանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ քր. դատ. օր.) ամրագրված՝ պաշտպանի իրավունքներն իրենցից ներկայացնում են ոչ այլ ինչ, քան «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանին վերապահված իրավունքների մասնավոր դրսևորումներ: Այսպես, «Փաստաբանության

¹⁰ Տե՛ս **Крылов Г. В.** Проблемы декриминализации деяний в советском уголовном праве. Автореф. канд. дис. М., 1986, էջ 20-22:

մասին» օրենքի հոդված 21-ի երրորդ մասի համաձայն՝ «Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ», իսկ քր. դատ. օր.-ի հոդված 73-ի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ պաշտպանը իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման: Ըստ «Փաստաբանության մասին» օրենքի հոդված 18-ի 2-րդ կետի՝ փաստաբանը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ, իսկ ըստ քր. դատ. օր.-ի հոդված 73-ի 1-ին մասի 5-րդ կետի՝ պաշտպանը իրավունք ունի քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար: Փաստաբանը իրավունք ունի համաձայնության դեպքում գրավոր հարցման ենթարկելու անձանց, ովքեր, ենթադրվում է, տիրապետում են գործին վերաբերող տեղեկատվությանը, որով փաստաբանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս (օրենքի հոդված 18-ի 4-րդ մաս), իսկ պաշտպանը իրավունք ունի հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր (քր. դատ. օր.-ի հոդված 73-ի 1-ին մասի 6-րդ կետ):

Ստացվում է, որ փաստաբանի մասնագիտական գործունեության քրեաիրավական պաշտպանությունը լիարժեք ձևով չի իրականացվում: Այսպես, «Փաստաբանության մասին» օրենքը հռչակում է փաստաբանի գործունեության երաշխիքները (հոդված 21) և փաստաբանի իրավական պաշտպանությունը (հոդված 22) փաստաբանական գործունեության բոլոր ոլորտներում, իսկ քր. օր.-ը արդարադատության դեմ ուղղված հանցագործություն է համարում միայն քրեական դատավարության ոլորտում և միայն պաշտպանի իրավավիճակով հանդես եկող փաստաբանի նկատմամբ սպառնալիքը և բռնի գործողությունները: Սակայն պարզ է, որ, օրինակ, քաղաքացիական դատավարությունում որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի կողմից ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու իրավունքի իրականացումն իր նշանակությամբ և բնույթով չի տարբերվում քրեական դատավարությունում պաշտպանի կողմից նյութեր ձեռք բերելու իրավունքի իրականացումից: Երկու դեպքում էլ փաստաբանը ներկայացնում է այնպիսի փաստական տվյալներ, որոնք հաստատում են գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք: Նույնը կարելի ասել նաև փաստաբանի կողմից քրեական դատավարության ոլորտից դուրս իրականացվող այլ իրավունքների մասին (վստահորդի հետ անարգել, մեկուսի հաղորդակցվելը, մասնավոր անձանց հարցման ենթարկելը, միջնորդություններ, բողոքներ ներկայացնելը և այլն):

Բացի այդ, կարծում ենք, որ չպետք է տարբերություն դրվի քրեական դատավարությունում որպես պաշտպան և որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանների կողմից իրավաբանական օգնություն ցույց տալուն ուղղված գործողությունների միջև: Փաստաբանը որպես պաշտպան կարող է հանդես գալ միայն հարուցված քրեական գործի պարագայում, իսկ նախքան քրեական գործի հարուցումը կատարվող ստուգողական գործողություններին նա չի կարող մասնակցել որպես պաշտպան, բայց այդ փուլում անձը կարող է օգտվել փաստաբանի իրավաբանական օգնությունից: Նախքան քրեական գործի հարուցումը կատարվող ստուգողական

գործողությունների շրջանակում հանցագործություն կատարելու կասկածանքով բերման ենթարկված անձին փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալը իր կարևորությամբ չի զիջում կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությանը:

Քր. օր.-ի հոդված 347-ի 2-րդ մասի ներկայիս ձևակերպման դեպքում ստացվում է, որ եթե փաստաբանի կողմից քաղաքացիական դատավարությանը որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցելու, քրեական դատավարությանը կամ վարչական իրավախախտումների գործերով վարույթին որպես ներկայացուցիչ մասնակցելու հետ կապված նրա նկատմամբ գործադրվի բռնություն կամ տրվի սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափերի գույք ոչնչացնելու սպառնալիք, ապա արարքը կորակվի որպես անձի դեմ ուղղված կոնկրետ հանցագործություն: Սակայն իրավաբանական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ փաստաբանական գործունեություն իրականացնելը հասցեագրված է ինչպես առանձին անձանց, այնպես էլ հասարակությանն ընդհանրապես: «Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների» 18-րդ կետում գրված է. «Իրենց գործառնությունների կատարման արդյունքում իրավաբանները չեն նույնացվում իրենց հաճախորդների կամ նրանց շահերի հետ»: Դա հիմք է տալիս խոսելու փաստաբանական գործունեության հանրային-իրավական բնույթի մասին: Իսկ դա նշանակում է, որ փաստաբանի նկատմամբ իր մասնագիտական գործունեության կապակցությամբ բռնություն գործադրելը կամ սպառնալը ուղղված չէ միայն նրա անձի դեմ, դրանով առաջին հերթին խախտվում են փաստաբանական գործունեության նորմալ իրականացումն ապահովող հասարակական հարաբերությունները:

Չետևաբար, փաստաբանի նկատմամբ իր գործունեության առնչությամբ կատարվող արարքն իր հանրային վտանգավորության բնույթով տարբերվում է անձի դեմ ուղղված հանցագործությունից, և պետք է հանգեցնի ավելի խիստ պատասխանատվության, քանի որ, անձի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններից բացի, այս դեպքում խախտվում են նաև փաստաբանական գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունները: Այսպես, պաշտպանի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը (հոդված 347, 3-րդ մաս) պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով, իսկ, օրինակ, փաստաբանի նկատմամբ քրեական դատավարությանը կամ վարչական իրավախախտումների գործերով վարույթին որպես ներկայացուցիչ մասնակցելու կապակցությամբ մամնատիպ գործողությունները կարող են որակվել որպես ծեծ (հոդված 118), որի համար նախատեսված ամենախիստ պատիժը կալանքն է՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Եթե պաշտպանի առողջությանը իր մասնագիտական գործունեության հետ կապված պատճառովի թեթև վնաս, ապա առողջության համար վտանգավոր լինելու հատկանիշից ելնելով՝ արարքը կորակվի հոդված 347-ի չորրորդ մասով, որի համար սահմանված է պատիժ՝ ազատազրկում հինգից տասը տարի ժամկետով, իսկ քրեական դատավարությանը որպես պաշտպան չմասնակցող փաստաբանի առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքում, եթե նույնիսկ դա կապված է փաստաբանական գործունեության իրականացման հետ, արարքը կորակվի քր. օր.-ի հոդված 117-ով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), որը հոդված 347-ի 4-րդ մասի համեմատությամբ նախատեսում է չա-

փազանց մեղմ պատիժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրիսնապատիկի չափով, կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Նշված դեպքերում պատժի համաչափության սկզբունքի (պենալիզացիայի) խախտման փաստն ակնհայտ է:

Սակայն հարցը միայն պենալիզացիան չէ. այստեղ առկա է նաև քրեականացմանն առնչվող խնդիր: Քրեաիրավական ներկայիս կարգավորման պարագայում ստեղծվել է այնպիսի իրադրություն, երբ քրեականացված է պաշտպանին քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամբ առողջությանը ցանկացած ծանրության վնաս պատճառելու և ցանկացած չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, իսկ փաստաբանին փաստաբանական գործունեության այլ ոլորտների կապակցությամբ տրված սպառնալիքը հանցագործություն է միայն այն դեպքում, երբ այն վերաբերում է սպանությանը, առողջությանը ծանր վնաս պատճառելուն կամ խոշոր չափերի գույք ոչնչացնելուն: Նշված դեպքում էլ առկա է քրեականացման կանոններից մեկի՝ քրեաիրավական արգելքի լրիվության խախտումը:

Ուստի, ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետությունը պետք է երաշխավորի փաստաբանի պաշտպանությունն իր մասնագիտական գործունեության բոլոր ոլորտներում, առաջարկում ենք քր. օր.-ի հոդված 347-ի 2-րդ մասի դիսպոզիցիան ձևակերպել հետևյալ կերպ. «Նույն արարքը, որը կատարվել է դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, փաստաբանի, փորձագետի կամ դատական ակտերի հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորի նկատմամբ կապված նախնական քննություն վարելու, գործը կամ նյութերը դատարանում քննելու, փաստաբանական գործունեություն իրականացնելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը կատարելու հետ»:

Նշված ձևակերպմամբ մի կողմից կիրականացվի փաստաբանի նկատմամբ իր մասնագիտական գործունեության հետ կապված սպառնալիքի և բռնի գործողությունների հանրային վտանգավորության բնույթի օրենսդրական վերագնահատում, իսկ մյուս կողմից՝ փաստաբանի նկատմամբ սպառնալիքի և բռնի գործողությունների որոշ դրսևորումների քրեականացում:

Բացի այդ, գտնում ենք, որ փաստաբանական գործունեության քրեաիրավական պաշտպանությունը չպետք է սահմանափակվի փաստաբանի նկատմամբ բռնությունը, ինչպես նաև բռնության և գույքի ոչնչացման ու վնասման սպառնալիքը քրեականացնելով: Իրավաբանական որակյալ օգնության մատչելիություն ապահովելու համար անհրաժեշտ է, որ պետությունը փաստաբանին ապահովագրի ոչ միայն բռնությունից և դրա սպառնալիքից, այլև դրանց չհանգող միջամտության այլ այնպիսի ձևերից, ինչպիսիք են շանտաժը, հարկադրանքը, հետապնդումը, կախվածության օգտագործումը, իրավաբանական օգնության ցուցաբերմանը տարբեր ձևերով խոչընդոտելը և այլն: Փաստաբանին լիարժեք անկախության երաշխիքներ ապահովելը շատ կարևոր է, քանի որ փաստաբանական գործունեության խնդիրներով պայմանավորված՝ փաստաբանը անխուսափելիորեն մրցակցում է այլ կողմի հետ: Խնդիրը միայն այն չէ, որ փաստաբանի գործունեության անխզելի պայմանը նրա դատավարական, կազմակերպչական և նյութական անկախությունն է իշխանության մարմիններից, որոնք հաճախ ստիպված են լինում հակադրվել փաստաբանին: Թե՛ քրեական դատավարությունում և թե՛ քաղաքացիական ու վարչական գործերով վարույթներում բացառված չէ փաստաբանի և նրա վստահորդի ըն-

դունած դիրքորոշմանը հակառակ դիրքորոշում ունեցող մասնավոր անձանց կողմից փաստաբանական գործունեությանը տարբեր եղանակներով խոչընդոտելու հնարավորությունը: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսդրությամբ փաստաբանական գործունեության իրականացմանը ապօրինի միջամտելու համար պատասխանատվություն նախատեսված չէ:

Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է քրեականացնել իրավաբանական օգնություն ցուցաբերելուն խոչընդոտելու նպատակով փաստաբանի գործունեությանը միջամտելը: Առհասարակ, քրեականացվող արարքի հանրային վտանգավորությունը ձևավորող կարևոր գործոններից մեկը քրեաիրավական պաշտպանության տակ վերցվող հասարակական հարաբերությունների արժեքավորությունն է¹¹: Փաստաբանի գործունեությանը միջամտելու հանրային վտանգավորության բնույթը արտահայտվում է այն բանում, որ դա ուղղված է փաստաբանական գործունեության անկախությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ: Իսկ այդ հարաբերությունների արժեքավորությունը կասկած չի հարուցում. փաստաբանի անկախությունը նրա մասնագիտական գործունեության արդյունավետության երաշխիքներից է: Բացի այդ՝ փաստաբանի օրինական գործունեությանը միջամտելու հետևանքով խախտվում են ոչ միայն փաստաբանի անկախության ապահովմանը միտված հասարակական հարաբերությունները, այլև իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքներն ու օրինական շահերը: Այսինքն՝ փաստաբանի օրինական գործունեությանը միջամտելու հետևանքով վերջին հաշվով խախտվում է նաև անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Օրինակ՝ Իսպանիայի քր. օր.-ի հոդված 464-ով պատասխանատվություն է սահմանված դատավարական դիրքորոշումը փոխելու նպատակով փաստաբանի վրա ուղղակի կամ անուղղակի ազդելու համար: Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 365-ը քրեական պատասխանատվություն է սահմանում փաստաբանների կամ այլ անձանց՝ քաղաքացիների պաշտպանությանը և նրանց իրավաբանական օգնություն ցույց տալուն ուղղված օրինական գործունեությանը խոչընդոտելու համար: Հոդվածի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ. «Փաստաբանների կամ այլ անձանց՝ քրեական դատավարությունում քաղաքացիների պաշտպանությանը կամ քաղաքացիներին և կազմակերպություններին իրավաբանական օգնություն ցույց տալուն ուղղված օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ այդ գործունեության ինքնուրույնությունը և անկախությունը այլ կերպ խախտելը, եթե այդ արարքները էական վնաս են պատճառել քաղաքացիների կամ կազմակերպությունների իրավունքներին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին»:

ՀՀ քր. օր.-ի հոդված 332-ը պատասխանատվություն է սահմանում միայն արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու (1-ին մաս) և գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու (2-րդ մաս) համար:

Քր. դատ. օր.-ը, հռչակելով քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքը, սահմանում է, որ քրեական դատավարությանը մաս-

¹¹ Стів Ляпунов Ю. И., ցշվ. աշխ., էջ 117:

նակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (հոդված 23, 5-րդ մաս): Յետևաբար՝ կողմերը պետք է հավասարապես ապահովագրված լինեն նաև իրենց դիրքորոշումը պաշտպանելուն խոչընդոտող ցանկացած միջամտությունից: Եվ եթե քր. օր.-ը սահմանում է մեղադրանքի կողմի սուբյեկտների գործունեության պաշտպանության երաշխիքներ, ապա պաշտպանի գործունեությանը միջամտելու համար քրեական պատասխանատվություն չսահմանելը պետք է համարել օրենսդրական բաց:

Պետք է նաև նշել, որ «Փաստաբանության մասին» օրենքի հոդված 21-ը սահմանում է, որ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է (1-ին մաս), և արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեությանը (2-րդ մաս): Օրենքն արգելում է միջամտությունը փաստաբանական գործունեության բոլոր ձևերին, սակայն նշված արգելքն ունի ընդամենը հռչակագրային բնույթ: Իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի 3-րդ մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնք չկատարելու համար իրավական հետևանքներ նախատեսված չեն: Յետևաբար, քրեաիրավական արգելք պետք է սահմանվի ինչպես քրեական դատավարությանը որպես պաշտպան հանդես եկող փաստաբանի գործունեությանը միջամտելու, այնպես էլ խորհրդատվություն և ներկայացուցչություն իրականացնելուն խոչընդոտելու նպատակով փաստաբանի գործունեությանը միջամտելու համար:

Ներկայացնենք փաստաբանի գործունեությանը միջամտելու քրեականացման պահանջումները հիմնավորող ևս մեկ փաստարկ: Փաստաբանի գործունեությունը շատ ընդհանուր գծեր ունի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հետ: Դրանք երկուսն էլ ուղղված են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Դեռ ավելին, եթե մարդու իրավունքների պաշտպանը իրականացնում է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 2), ապա փաստաբանական գործունեությունն ուղղված է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ընդհանրապես: Եվ եթե մարդու իրավունքն էրի պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը հանցագործություն է (քր. օր.-ի հոդված 332.1), ապա քրեաիրավական արգելք պետք է սահմանվի նաև փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալուն խոչընդոտելու նպատակով նրա գործունեությանը միջամտելու համար:

Փաստաբանական գործունեությանը միջամտելու քրեականացման թույլատրելիությունը հիմնավորվում է այն փաստարկով, որ այդ արարքն ամբողջությամբ չի ընդգրկվում քր. օր.-ով նախատեսված որևէ հանցակազմի շրջանակներում: Գիշտ է, պաշտոնատար անձի կողմից փաստաբանի օրինական գործունեությանը միջամտելը համապատասխան հատկանիշների առկայության դեպքում կարող է որակվել որպես պաշտոնական լիազորությունների չարաշահում կամ անցում, սակայն նշված երկու

հանցակազմերն էլ նյութական են, իսկ փաստաբանի օրինական գործունեությանը խոչընդոտելն առաջարկում ենք նախատեսել ձևական հանցակազմի միջոցով: Բացի այդ՝ փաստաբանի օրինական գործունեությանը կարող են խոչընդոտել ոչ միայն պաշտոնատար անձինք, այլև ընդհանուր սուբյեկտի հատկանիշներով օժտված անձինք:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ը լրացնել 332.3 հոդվածով («Փաստաբանի օրինական գործունեությանը խոչընդոտելը»), և 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ կերպ. «Փաստաբանի օրինական գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը՝ խորհրդատվություն, ներկայացուցչություն կամ քրեական գործով պաշտպանություն իրականացնելուն խոչընդոտելու նպատակով», իսկ 2-րդ մասով նախատեսել հանցագործության հետևյալ որակյալ տեսակը. «Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով»:

Խոսելով արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների շրջանակի ընդլայնման միտումների մասին՝ նշենք, որ նպատակահարմար է արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության համապատասխան նորմերի օրինակով ընդլայնել քր. օր.-ի հոդված 342-ով նախատեսված հանցագործության («Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը») շրջանակները: Օրինակ՝ Բելառուսի Հանրապետության քր. օր.-ի հոդված 407-ը քրեորեն պատժելի է համարում ոչ միայն նախաքննության տվյալների, այլև դռնփակ դատաքննության տվյալների հրապարակումը, իսկ հոդված 408-ը՝ քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ կիրառված պաշտպանության միջոցների մասին տվյալների հրապարակումը: Ռուսաստանի Դաշնության քր. օր.-ի հոդված 311-ը, Ղազախստանի Հանրապետության քր. օր.-ի հոդված 356-ը պատասխանատվություն են սահմանում դատավորի և քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ կիրառվող պաշտպանության միջոցների մասին տվյալների հրապարակման համար: Կարծում ենք, որ նշված արարքների համար քրեական պատասխանատվության սահմանումը կապահովի քրեադատավարական ոլորտում քրեականացման համակարգային-իրավական գործառույթի լիարժեք իրականացումը:

Այսպիսով, քրեական օրենսդրության բացերի լրացումը պետության քրեաիրավական քաղաքականությունը մշակելու և իրականացնելու առումով ելակետային դրույթներից մեկն է: Ուստի քրեական օրենսդրության բացերի հայտնաբերման ուղղությամբ գիտական ուսումնասիրություններն անչափ կարևոր են և արդիական: Քրեական օրենսդրության բացերի հայտնաբերման միջոցներ պետք է համարվեն օրենսդրության համակարգային վերլուծությունը, առանձին քրեաիրավական նորմերի գործողության շրջանակների ճիշտ որոշումը, դատաքննչական պրակտիկայի ուսումնասիրությունն ու ընդհանրացումը, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության համեմատական ուսումնասիրությունը: Օրենսդիրը պետք է մշտապես շոշափի հասարակական հարաբերությունների զարգացման զարկերակը, որպեսզի նախագծվող և գործող քրեաիրավական նորմերում արտացոլվեն քրեականացման իրական հասարակական պահանջումները:

МИСАК МАРКОСЯН – Проблемы восполнения пробелов уголовного законодательства (Некоторые вопросы криминализации). – Статья посвящена

криминализации некоторых общественно опасных деяний. Законодательные пробелы обусловлены рядом объективных и субъективных причин. Исходя из известного принципа «*nullum crimen sine lege*» («нет преступления без указания на то в законе»), важно своевременно обнаружить и восполнить пробелы уголовного законодательства. При этом восполнить их следует посредством криминализации, а не применяя уголовный закон по аналогии или расширительно толкуя уголовно-правовые нормы. В статье проанализированы отдельные нормы отечественного законодательства, сопоставлены уголовные законодательства ряда зарубежных стран и обоснован вывод о необходимости криминализовать некоторые общественно опасные деяния и расширить сферу действия уголовно-правовых запретов, установленных законодательством РА.

К примеру, следует расширить объем криминализации похищения человека, а также причинения имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием; установить уголовную ответственность за некоторые общественно опасные деяния, совершаемые в сфере генетики и воспроизводства человека; криминализовать незаконное изготовление газового, холодного и метательного оружия, жестокое обращение с животными, распространение произведений, пропагандирующих жестокость и насилие, воспрепятствование законной деятельности адвоката, разглашение данных закрытого судебного заседания, разглашение сведений о мерах безопасности, применяемых в отношении участников уголовного процесса.

Необходимо путем тщательных исследований обнаруживать пробелы уголовного законодательства; в статье предлагаются эффективные средства, как именно это делать.

MISAK MARKOSYAN – *The problems of filling up the gaps of criminal legislation (some criminalization issues)*. – The present paper focuses on the criminalization of certain socially dangerous acts.

The author provides brief description of the objective and subjective reasons of legislative gaps and notes that early detection and filling up the gaps is very important especially in the criminal law referring to the known principle “*nullum crimen sine lege*” (no crime without a law). In the terms of the legality principle, the gaps in the criminal law should be filled up only by criminalization rather than by application of the criminal law on the analogy or broad interpretation of criminal legal norms.

Based on systemic analysis of certain norms of national legislation and a comparative study of criminal law of several foreign countries, the author justifies the need for criminalization of some socially dangerous acts and extension of certain penal prohibitions established by the Criminal Code of the Republic of Armenia.

In particular, it is proposed to extend the frames of criminalization of kidnapping as well as causing property damage by false pretence or by abuse of trust; to establish criminal responsibility for some socially dangerous acts committed in genetics and human reproduction; to criminalize illegal manufacture of gas spray, offensive and missile weapons, cruelty to animals, spread of literature propagating cruelty and violence, obstruction of the lawful activities of the lawyer and notary, disclosure of records of closed judicial session, disclosure of information about security measures applied for the participants of the criminal procedure.

In the final part of the paper, the author notes the necessity of long-term scientific research on gap detection in the criminal law and presents some efficient ways of their revelation.